Գավառի պետական համալսարանի որակի ապահովման բաժնի

2022 թվականի օգոստոսի 24

թիվ 1 նիստի արձանագրություն

ՕՐԱԿԱՐԳ՝

1. ԳՊՀ էլեկտրոնային ուսուցման Learn.gsu.am համակարգի մշտադիտարկման արդյունքների մասին:
   /Զեկուցողներ՝ ֆակուլտետային պատասխանատուներ/
2. ԳՊՀ ՈԱԲ հաշվետվության և 2022-2023 ուսումնական տարվա զարգացման հիմնական ուղղությունների քննարկում և ներկայացում:
   /Զեկուցող՝ Որակի ապահովման բաժնի մասնագետ Մարիամ Նախրատյան, Նոնա Մուրադյան/
3. Ընթացիկ հարցեր:

1. **Լսեցին** - Ֆակուլտետների որակի ապահովման պատասխանատուները ներկայացրին ԳՊՀ էլեկտրոնային ուսուցման Learn.gsu.am համակարգի մշտադիտարկման արդյունքները:

Մշտադիտարկման արդյունքում պարզվել է, որ դասընթացների մեծ մասը համալրված է ուսումնական նյութերով, սակայն առանձին դասընթացներում բացակայում են դասախոսությունների նյութերը, հանձնարարությունների նկարագրությունները: Ուսանողների հարցումների արդյունքները նույնպես ցույց են տվել, որ բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականություն ամբիոնի դասընթացների նյութերը հասանելի չեն կամ ամբողջությամբ չեն թարմացվել:

Քննարկեցին - Նշվեց, որ էլեկտրոնային ուսուցման միջավայրի ամբողջականությունը կարևոր նախապայման է ուսանողակենտրոն ուսուցման և կրթության որակի ապահովման համար:

Որոշեցին

1. Մշտադիտարկման արդյունքները մինչև 2022 թվականի օգոստոսի 30-ը տրամադրել համապատասխան ամբիոններին:
2. Ապահովել բոլոր դասընթացների ամբողջական համալրումը մինչև ուսումնական տարվա մեկնարկը:

3. Սեպտեմբերի վերջին իրականացնել կրկնակի մշտադիտարկում և արդյունքները ներկայացնել ԳՊՀ ռեկտորատ:

2. Լսեցին - ՈԱ բաժնի մասնագետները ներկայացրին ԳՊՀ ՈԱԲ-ի 2021–2022 ուսումնական տարվա գործունեության հաշվետվությունը, իրականացված հարցումների արդյունքները և 2022–2023 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունները:

Ներկայացվեց, որ հաշվետու տարվա ընթացքում իրականացվել են շահակիցների տարբեր խմբերի մասնակցությամբ որակի ապահովման հարցումներ, մասնավորապես՝ ուսանողների և դասախոսների բավարարվածության հարցումներ, շրջանավարտների հարցումներ, գործատուների կարծիքների հավաքագրում, ինչպես նաև կրթական ծրագրերի ներքին գնահատումներ: Ստացված արդյունքները վերլուծվել են և օգտագործվել կրթական ծրագրերի, ուսուցման գործընթացի և համալսարանի գործունեության շարունակական բարելավման նպատակով:

Քննարկեցին - Քննարկման ընթացքում նշվեց, որ իրականացված հարցումների արդյունքների վերլուծությունը վկայում է էլեկտրոնային ուսուցման ռեսուրսների հետագա զարգացման, կրթական ծրագրերում գործնական բաղադրիչի տեսակարար կշռի բարձրացման՝ մանկավարժական և արտադրական պրակտիկաների ընդլայնման միջոցով, ինչպես նաև կրթական ծրագրերի վերանայման գործընթացում շահակիցների մասնակցության առավել ակտիվ ապահովման անհրաժեշտության մասին:

Որոշեցին

1. Հաստատել 2022–2023 ուսումնական տարվա զարգացման հիմնական ուղղությունները և ներկայացնել ԳՊՀ ռեկտորատի և գիտխորհրդի քննարկմանը:
2. Մշակել միջոցառումների ծրագիր՝ հարցումների արդյունքներից բխող բարելավումների իրականացման համար:

<u>Ընթացիկ հարց</u>

3. Լսեցին - ՈԱ բաժնի մասնագետը ներկայացրեց ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը:

Նշվեց, որ 2021–2022 ուսումնական տարվա ընթացքում իրականացվել են որակի ապահովման գործընթացներում շահակիցների ներգրավմանն ուղղված մի շարք միջոցառումներ: Մասնավորապես, ուսանողները մասնակցել են դասավանդման որակի գնահատման հարցումներին, դասախոսները՝ ինքնագնահատման գործընթացին, շրջանավարտները ներկայացրել են կրթական ծրագրերի արդիականացման վերաբերյալ առաջարկություններ, իսկ գործատուները մասնակցել են մասնագիտությունների կրթական ծրագրերի քննարկումներին՝ ներկայացնելով շրջանավարտների մասնագիտական կարողությունների զարգացմանն ու աշխատաշուկայի պահանջներին համապատասխանեցման վերաբերյալ առաջարկություններ:

Քննարկեցին - Քննարկման ընթացքում արձանագրվեց, որ շահակիցների կողմից ներկայացված առաջարկությունները հիմնականում վերաբերում են սովորողների գործնական հմտությունների զարգացմանը, օտար լեզուների և թվային կարողությունների ամրապնդմանը, ինչպես նաև աշխատաշուկայի արդի պահանջներին համապատասխան մասնագիտական և փոխանցելի կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը:

Որոշեցին

1. ՄԿԾ-ների վերանայմանը նվիրված ամբիոնային և ֆակուլտետային քննարկումներին ներգրավել գործատուների և շրջանավարտների:
2. Տարեկան առնվազն մեկ անգամ կազմակերպել արտաքին շահակիցների կլոր սեղան-քննարկում:
3. Հաջորդ հաշվետվությունում ներկայացնել շահակիցների առաջարկությունների իրականացման արդյունքները:

Պատասխանատու՝ ՈԱ բաժին, ամբիոնի վարիչներ, ֆակուլտետային ՈԱ պատասխանատուներ:

Կատարման ժամկետ՝ 2022–2023 ուսումնական տարի:

ՈԱԲ նիստը նախագահող՝ **Ք. Հայրապետյան**

Քարտուղար՝ **Մ. Նախրատյան**

Գավառի պետական համալսարանի որակի ապահովման բաժնի

2022 թվականի հոկտեմբերի 26

թիվ 2 նիստի արձանագրություն

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Ներքին շահակիցների՝ ուսանողների կարիքների վերհանման մասին:
   /Զեկուցող՝ Որակի ապահովման բաժնի մասնագետ Նոնա Մուրադյան/:
2. ԳՊՀ-ում դասավանդման որակի և ուսումնական գործընթացի արդյունավետության գնահատման հարցման արդյունքների վերլուծություն մասին:
   /Զեկուցող՝ Որակի ապահովման բաժնի մասնագետ Նոնա Մուրադյան/
3. ԳՊՀ-դպրոցներ համագործակցության մասին:
   /Զեկուցող՝ Որակի բաժնի ժ/պ Ք. Հայրապետյան/

1. Լսեցին - Ն. Մուրադյանը ներկայացրեց ուսանողների կարիքների և բավարարվածության ուսումնասիրման նպատակով մշակված հարցաթերթը՝ անդրադառնալով դրա կառուցվածքին, բաց և փակ հարցերի համադրման հիմնավորմանը, ինչպես նաև տվյալների հավաքագրման և վերլուծության մեթոդաբանությանը: Նշվեց, որ հարցման արդյունքները ծառայելու են մասնագիտական կրթական ծրագրերի, դասավանդման գործընթացի և ուսանողներին մատուցվող ծառայությունների շարունակական գնահատման և բարելավման, ինչպես նաև որակի ապահովման գործընթացների արդյունավետության բարձրացման նպատակներին:

2. Քննարկեցին - Նիստի մասնակիցները կարևորեցին, որ մշակված հարցաթերթը հնարավորություն է տալիս ստանալ ոչ միայն քանակական, այլև որակական տեղեկատվություն ուսանողների կարիքների, ակնկալիքների, դժվարությունների և առաջարկությունների վերաբերյալ՝ ապահովելով տվյալների առավել համակողմանի վերլուծություն: Քննարկման ընթացքում առաջարկվեց հարցաթերթում ներառել նաև ուսանողների կարծիքները թվային ուսուցման միջավայրի, ակադեմիական խորհրդատվության, գրադարանային և տեղեկատվական ծառայությունների որակի ու հասանելիության վերաբերյալ, ինչը

կնպաստի համալսարանի ծառայությունների և կրթական գործընթացի հետագա բարելավմանը:

Որոշեցին

1. Հաստատել ուսանողների կարիքների վերհանման հարցաթերթը:
2. Հարցումն իրականացնել բոլոր կուրսերում՝ մինչև 2022 թվականի նոյեմբերի 20-ը:
3. Հարցման արդյունքների վերլուծությունը ներկայացնել ռեկտորատի քննարկմանը:

2. Լսեցին - Ն. Մուրադյանը ներկայացրեց դասավանդման որակի և ուսումնական գործընթացի արդյունավետության գնահատման հարցման ամփոփ արդյունքները: Անդրադարձ կատարվեց ուսանողների կողմից բարձր գնահատված ուղղություններին, ինչպես նաև արձանագրված խնդիրներին՝ դասընթացների կազմակերպման, ուսումնական նյութերի հասանելիության, գնահատման թափանցիկության և դասավանդման մեթոդների կիրառման վերաբերյալ:

Քննարկեցին - Քննարկման ընթացքում նշվեց, որ հարցումների արդյունքները պետք է դիտարկվեն որպես բարելավումների պլանավորման հիմք: Մասնակիցները կարևորեցին արդյունքների ներկայացումը ֆակուլտետներին և ամբիոններին, որպեսզի յուրաքանչյուր կառուցվածքային ստորաբաժանում մշակի իր գործողությունների ծրագիրը: Ուսանողները շեշտեցին հետադարձ կապի ապահովման անհրաժեշտությունը՝ տեղեկանալու, թե իրենց առաջարկությունների հիման վրա ինչ փոփոխություններ են իրականացվել:

Որոշեցին

1. Հարցման արդյունքները ներկայացնել ԳՊՀ ռեկտորատի և գիտական խորհրդի քննարկմանը:
2. Ֆակուլտետներին և ամբիոններին հանձնարարել մշակել բարելավման միջոցառումների ծրագրեր՝ հիմնված հարցումների արդյունքների վրա:
3. Բարելավումների կատարման ընթացքը գնահատել հաջորդ կիսամյակի ընթացքում իրականացվելիք մշտադիտարկման միջոցով:

3. Լսեցին - Ք. Հայրապետյանը ներկայացրեց ԳՊՀ–դպրոցներ համագործակցության ընթացիկ արդյունքները և զարգացման

հնարավորությունները: Նշվեց, որ համագործակցությունը վերջին շրջանում իրականացվել է հիմնականում առցանց ձևաչափով, սակայն անհրաժեշտ է վերականգնել նաև անմիջական համագործակցության ձևերը:

Արտահայտվեցին - Ուսանողները առաջարկեցին ակտիվացնել իրենց մասնակցությունը ԳՊՀ–դպրոց համագործակցության ծրագրերում, կազմակերպել մասնագիտական կողմնորոշման հանդիպումներ, բաց դասեր, մասնագիտական կողմնորոշման միջոցառումներ: Նշվեց, որ նման նախաձեռնությունները կնպաստեն ինչպես դիմորդների մասնագիտական կողմնորոշմանը, այնպես էլ ուսանողների հաղորդակցական և մասնագիտական կարողությունների զարգացմանը:

Քննարկեցին - Քննարկման արդյունքում արձանագրվեց, որ դպրոցների, ուսանողների և դասախոսների համատեղ մասնակցությամբ իրականացվող միջոցառումները կարող են դառնալ ԳՊՀ հանրային պատասխանատվության և արտաքին շահակիցների ներգրավման արդյունավետ գործիք:

Որոշեցին -

1. Վերսկսել ԳՊՀ–դպրոցներ համագործակցության շրջանակում մասնագիտական կողմնորոշման դասընթացների կազմակերպումը:
2. Համագործակցությունն իրականացնել համակցված՝ առցանց և առկա ձևաչափերով:
3. Գնահատել համագործակցության արդյունավետությունը մասնակիցների հետադարձ կապի և մասնակցության ցուցանիշների հիման վրա:

Պատասխանատու՝ ՈԱ բաժին, Ուսանողական խորհուրդ, ֆակուլտետներ:
Կատարման ժամկետ՝ 2022–2023 ուսումնական տարի:

ՈԱԲ նիստը նախագահող՝ **Ք. Հայրապետյան**
Քարտուղար՝ **Մ. Նախրատյան**

Գավառի պետական համալսարանի որակի ապահովման բաժնի

2022 թվականի նոյեմբերի 30

թիվ 3 նիստի արձանագրություն

ՕՐԱԿԱՐԳ՝

1. ԳՊՀ առաջին կուրսի ուսանողների կարիքների վերհանման վերաբերյալ հարցման արդյունքների վերլուծության մասին:

(Զեկուցող՝ ՈԱԲ վարիչի պաշտոնակատար Ք. Հայրապետյան)

2. Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի համադրման արդյունավետությունից Գավառի պետական համալսարանի ուսանողների բավարարվածության գնահատման հարցաթերթի քննարկման մասին:

(Զեկուցող՝ ՈԱԲ մասնագետ Նոնա Մուրադյան)

3. Learn.gsu.am էլեկտրոնային ուսուցման համակարգի մշտադիտարկման արդյունքների մասին:

(Զեկուցող՝ ՈԱԲ մասնագետ Մարիամ Նախրատյան)

1. **Լսեցին** - Ք. Հայրապետյանը ներկայացրեց առաջին կուրսի ուսանողների կարիքների վերհանման նպատակով իրականացված հարցման արդյունքների վերլուծությունը: Նշվեց, որ հարցման նպատակն էր բացահայտել նրանց առաջնային կրթական կարիքները:

Արտահայտվեցին - Ֆակուլտետների ՈԱ պատասխանատուները և Ակադեմիական քաղաքականության բաժնի ներկայացուցիչները կարևորեցին հարցման արդյունքների կիրառումը կրթական գործընթացների շարունակական բարելավման համար:

Առաջարկվեց - մշակել առաջին կուրսեցիների աջակցության համալիր միջոցառումների ծրագիր, յուրաքանչյուր ֆակուլտետում կազմակերպել ուսանողների հետ հետադարձ կապի պարբերական հանդիպումներ:

Որոշեցին

1. Հաստատել հարցման արդյունքների վերլուծությունը:
2. Հարցման արդյունքները ներկայացնել ռեկտորատին և ֆակուլտետներին:

2. Լսեցին - Նոնա Մուրադյանը ներկայացրեց «Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի համադրման արդյունավետությունից ԳՊՀ ուսանողների բավարարվածության գնահատման» հարցաթերթի նախագիծը:

Նշվեց, որ հարցաթերթի նպատակն է գնահատել ուսանողների մասնակցությունը գիտահետազոտական աշխատանքներին, հետազոտական բաղադրիչի ինտեգրումը կրթական ծրագրերում և դասախոսների աջակցությունը հետազոտական գործունեությանը:

Արտահայտվեցին - Ակադեմիական քաղաքականության բաժնի ներկայացուցիչները, ֆակուլտետների որակի պատասխանատուները և նիստի մասնակիցները առաջարկեցին հարցաթերթում ներառել լրացուցիչ հարցեր, որոնք հնարավորություն կտան գնահատել ամբիոնների ներգրավվածությունը հետազոտական գործընթացներում, դասախոսների դերակատարումը գործընթացում, ուսանողների մասնակցությունը գիտաժողովներին, հետազոտական գործունեության արդյունքների կիրառումը ուսումնական գործընթացում:

Քննարկման արդյունքում արձանագրվեց, որ լրացումները կբարձրացնեն հարցաթերթի տեղեկատվական արժեքը և կապահովեն առավել ամբողջական տվյալներ հետագա բարելավումների պլանավորման համար:

Որոշեցին

1. Հաստատել հարցաթերթ՝ առաջարկված փոփոխություններով:
2. Հարցաթերթը ներկայացնել ԳՊՀ ռեկտորատի և գիտական խորհրդի քննարկմանը:

3. Լսեցին - Մարիամ Նախրատյանը ներկայացրեց Learn.gsu.am էլեկտրոնային ուսուցման համակարգի հերթական մշտադիտարկման արդյունքները:

Արձանագրվեց, որ դասընթացների մեծ մասում տեղադրված են ուսումնական նյութերը, սակայն առանձին դասընթացներում դեռևս բացակայում են դասախոսությունների նյութերը, լրացուցիչ ուսումնամեթոդական նյութերը:

Նշվեց նաև, որ որոշ առարկայական տիրույթներ դեռևս ամբողջությամբ հասանելի չեն ուսանողներին:

Արտահայտվեցին - Ֆակուլտետների ներկայացուցիչները կարևորեցին էլեկտրոնային ուսուցման միջավայրի ամբողջականությունը՝ որպես կրթության որակի ապահովման և ուսանողակենտրոն ուսուցման կարևոր բաղադրիչ:

Առաջարկվեց սահմանել հստակ ժամկետներ բացակայող նյութերի համալրման համար, իրականացնել կրկնակի մշտադիտարկում, մշտադիտարկման արդյունքները ներկայացնել ռեկտորատ:

Որոշեցին

1. Մինչև հեռակա ուսուցման դասերի մեկնարկը համալրել Learn.gsu.am համակարգի առարկայական տիրույթներում բացակայող ուսումնական նյութերը:
2. Ֆակուլտետների պատասխանատուներին մինչև 2022 թվականի դեկտեմբերի 20-ը ապահովել դասընթացների ամբողջական համալրումը:
3. 2023 թվականի հունվարին իրականացնել կրկնակի մշտադիտարկում և արդյունքները ներկայացնել ռեկտորատին:

Պատասխանատու՝ ՈԱ բաժին, ֆակուլտետներ, ամբիոնի վարիչներ:

Կատարման ժամկետ՝ 2022–2023 ուսումնական տարի:

ՈԱԲ նիստը նախագահող՝ **Ք. Հայրապետյան**

Քարտուղար՝ **Մ. Նախրատյան**

Գավառի պետական համալսարանի որակի ապահովման բաժնի

2023 թվականի դեկտեմբերի 28-ի

թիվ 4 նիստի արձանագրություն

ՕՐԱԿԱՐԳ՝

1. ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածուների 2021–2022 թվականների մշտադիտարկման արդյունքների մասին:

   /Զեկուցող՝ Որակի ապահովման բաժնի մասնագետ Մարիամ Նախրատյան/

2. Բուհի հասարակական պատասխանատվության մասին:

   /Զեկուցող՝ Արտաքին կապերի և լրատվության բաժնի վարիչ Լ. Թոռչյան/

3. Learn.gsu.am էլեկտրոնային ուսուցման համակարգի մշտադիտարկման մասին:

   /Զեկուցող՝ Որակի ապահովման բաժնի վարիչի ժ/պ Ք. Հայրապետյան/

1. **Լսեցին** - Մարիամ Նախրատյանը ներկայացրեց ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածուների 2021–2022 թվականների մշտադիտարկման արդյունքները: Համեմատական վերլուծությամբ արձանագրվեց, որ 2022 թվականին աճել է հրապարակված հոդվածների ընդհանուր թիվը: Նշվեց նաև, որ ժողովածուներում հրապարակումներ են ունեցել ոչ միայն ԳՊՀ դասախոսներն ու վարչական աշխատակիցները, այլև գիտական ղեկավարների հետ համատեղ ուսանողները, ինչպես նաև այլ բուհերի դասախոսներ, երիտասարդ գիտնականներ, գիտաշխատողներ և հանրակրթական դպրոցների ուսուցիչներ, ինչը վկայում է համալսարանի գիտական համագործակցության ընդլայնման մասին:

   Քննարկեցին - Նիստի մասնակիցները կարևորեցին գիտական հոդվածների ժողովածուների որակի շարունակական բարձրացումը, արտաքին հեղինակների ներգրավվածության ընդլայնումը և ուսանողների հետազոտական ակտիվության խթանումը: Առաջարկվեց վերլուծել նաև հոդվածների թեմատիկ ուղղվածությունը, հեղինակային կազմի բազմազանությունը և միջազգային համագործակցության ցուցանիշները:

   Որոշեցին

   1. Գիտական հոդվածների ժողովածուների տարեկան վերլուծություններում ներառել նաև հեղինակային կազմի, արտաքին համագործակցության և ուսանողական հրապարակումների վերաբերյալ ցուցանիշներ:

2. Արդյունքները ներկայացնել ԳՊՀ գիտական խորհրդին՝ գիտահետազոտական գործունեության հետագա զարգացման նպատակով:

2. Լսեցին – ԳՊՀ Արտաքին կապերի և լրատվության բաժնի վարիչ Լ. Թոռչյանը ներկայացրեց համալսարանի հասարակական պատասխանատվության ուղղությամբ իրականացվող աշխատանքները՝ անդրադառնալով ԳՊՀ պաշտոնական կայքի, սոցիալական ցանցերի և տեղեկատվական այլ հարթակների միջոցով ներքին և արտաքին շահակիցներին տեղեկատվության մատչելիության ապահովմանը: Նշվեց, որ տեղեկատվության հրապարակայնությունը նպաստում է համալսարանի գործունեության թափանցիկությանը և հանրային հաշվետվողականությանը:

Արտահայտվեցին - Նիստին մասնակցող ուսանողներն առաջարկեցին ԳՊՀ պաշտոնական կայքի «Դիմորդ» բաժնում ավելացնել յուրաքանչյուր կրթական ծրագրի մանրամասն նկարագրությունը, ընդունելության պայմանների վերաբերյալ պարզաբանումներ, ինչպես նաև ստեղծել «Հաճախ տրվող հարցեր» կամ «Առցանց դիմում» ենթաբաժին, որը կբարձրացնի տեղեկատվության մատչելիությունը դիմորդների և նրանց ծնողների համար:

Արտաքին կապերի բաժնի աշխատակիցները նշեցին, որ նպատակահարմար է պարբերաբար ուսումնասիրել կայքից օգտվողների կարծիքները և դրանց հիման վրա կատարել բովանդակային բարելավումներ:

Որոշեցին

1. Թարմացնել ԳՊՀ պաշտոնական կայքի «Դիմորդ» բաժնի բովանդակությունը, ստեղծել «Հաճախ տրվող հարցեր» կամ «Առցանց դիմում» ենթաբաժին
2. Տարեկան առնվազն մեկ անգամ իրականացնել կայքից օգտվողների բավարարվածության հարցում և արդյունքները քննարկել ՈԱԲ նիստում:

3. Լսեցին - Ք. Հայրապետյանը ներկայացրեց Learn.gsu.am էլեկտրոնային ուսուցման համակարգի մշտադիտարկման արդյունքները: Նշվեց, որ դասընթացների մեծ մասն ապահովված է անհրաժեշտ ուսումնական նյութերով: Արձանագրվեց նաև, որ որոշ առարկայական տիրույթներ տեխնիկական պատճառներով դեռևս հասանելի չեն ուսանողներին, այս ուղղությամբ աշխատանքներ են տանում ԳՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի աշխատակիցները:

Քննարկեցին - Մասնակիցները կարևորեցին էլեկտրոնային ուսուցման միջավայրի ամբողջականությունը՝ որպես ուսանողակենտրոն կրթության և ՈԱ կարևոր բաղադրիչ: Առաջարկվեց սահմանել համակարգի պարբերական մշտադիտարկման միասնական ժամանակացույց և ամրապնդել ֆակուլտետների պատասխանատուների մասնակցությունը գործընթացին:

Որոշեցին

1. Ֆակուլտետների և ամբիոնների պատասխանատուներին հանձնարարել ապահովել բոլոր դասընթացների ամբողջական և արդիական բովանդակությունը:
2. Մշտադիտարկման արդյունքները ներառել ՈԱԲ տարեկան հաշվետվության մեջ՝ հետագա բարելավումների պլանավորման նպատակով:

Պատասխանատու՝ ԳՊՀ ՈԱ, արտաքին կապերի և լրատվության և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժիններ, ֆակուլտետներ, ամբիոնի վարիչներ:
Կատարման ժամկետ՝ 2022–2023 ուսումնական տարի:

ՈԱԲ նիստը նախագահող՝ **Ք. Հայրապետյան**

Քարտուղար՝ **Մ. Նախրատյան**

Գավառի պետական համալսարանի որակի ապահովման բաժնի

2023 թվականի հունվարի 26-ի

թիվ 5 նիստի արձանագրություն

ՕՐԱԿԱՐԳ՝

1. ԳՊՀ-ի ուսումնական ռեսուրսներից առկա ուսուցման համակարգում սովորող ուսանողների բավարարվածության գնահատման արդյունքների վերլուծության մասին:

   /Զեկուցող՝ Որակի ապահովման բաժնի վարիչի ժ/պ Ք.Հայրապետյան/

2. ԳՊՀ-գործատու համագործակցության քննարկում:

   /Զեկուցող՝ Որակի ապահովման բաժնի մասնագետ Մ. Նախրատյան/

1. Լսեցին - Ք. Հայրապետյանը ներկայացրեց ԳՊՀ-ի ուսումնական ռեսուրսներից առկա ուսուցման համակարգում սովորող ուսանողների բավարարվածության գնահատման արդյունքները: Նշվեց, որ ուսանողները հիմնականում դրական են գնահատում համալսարանի կրթական միջավայրը, սակայն առանձնացրել են նաև բարելավման ենթակա ուղղություններ՝ գրադարանային և էլեկտրոնային նյութերի թարմացում, գործնական բաղադրիչի ավելացում որոշ կրթական ծրագրերում:

Քննարկեցին - Նիստի մասնակիցներն ընդգծեցին, որ ուսանողների բավարարվածության մակարդակը հանդիսանում է կրթության որակի կարևոր ցուցանիշ: Առաջարկվեց արդյունքները օգտագործել ՄԿԾ-ների վերանայման գործընթացներում:

Որոշեցին

1. Ուսանողների բավարարվածության արդյունքները ներկայացնել ԳՊՀ ռեկտորատի քննարկմանը:
2. Կրթական ծրագրերի վերանայման ընթացքում հաշվի առնել ուսանողների առաջարկությունները:

2. Լսեցին - Մ. Նախրատյանը ներկայացրեց բուհ-գործատու համագործակցության ընթացիկ վիճակը՝ ընդգծելով գործատուների ներգրավման կարևորությունը ՄԿԾ-ների վերջնարդյունքների ձևավորման գործընթացում:

Նիստին հրավիրված գործատու դասախոսները ընդգծեցին, որ ԳՊՀ շրջանավարտների մասնագիտական պատրաստվածությունը հիմնականում

համապատասխանում է աշխատաշուկայի պահանջներին, սակայն անհրաժեշտ է ուժեղացնել գործնական հմտությունները, ընդլայնել արտադրական պրակտիկաների շրջանակը:

Քննարկեցին - Քննարկման ընթացքում արձանագրվեց, որ բուհ-գործատու համագործակցությունը հանդիսանում է կրթության որակի ապահովման և շրջանավարտների մրցունակության բարձրացման կարևոր գործոն:

Որոշեցին

1. Մշակել ԳՊՀ-գործատու համագործակցության զարգացման միջոցառումների ծրագիր:
2. Ապահովել գործատուների ներգրավվածությունը կրթական ծրագրերի վերանայման աշխատանքային խմբերում:
3. Ընդլայնել պրակտիկ ուսուցման հնարավորությունները համապատասխան մասնագիտական ոլորտներում:

Պատասխանատու՝ ԳՊՀ ՈԱ բաժին, ֆակուլտետներ, ամբիոնի վարիչներ:

Կատարման ժամկետ՝ 2022–2023 ուսումնական տարի:

ՈԱԲ նիստը նախագահող՝ **Ք. Հայրապետյան**

Քարտուղար՝ **Մ. Նախրատյան**

Գավառի պետական համալսարանի որակի ապահովման բաժնի

2023 թվականի փետրվարի 22-ի

թիվ 6 նիստի արձանագրություն

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Վարչական և ուսումնաօժանդակ կազմի բավարարվածության գնահատման հարցումների վերլուծության արդյունքների մասին:

/Զեկուցող՝ Որակի ապահովման բաժնի մասնագետ Ն. Մուրադյան/

2. ԳՊՀ-դպրոցներ համագործակցության մասին:

/Զեկուցող՝ Որակի ապահովման բաժնի մասնագետ Մ. Նախրատյան/

/Զեկուցող՝ ԳՊՀ որակի ապահովման բաժնի վարիչի ժ/պ Ք. Հայրապետյան/

3. ԳՊՀ կայքէջի մշտադիտարկման աշխատանքների մասին:

/Զեկուցող՝ Որակի բաժնի մասնագետ Նոնա Մուրադյան/

1. Լսեցին - Ն. Մուրադյանը ներկայացրեց վարչական և ուսումնաօժանդակ կազմի բավարարվածության գնահատման հարցումների արդյունքների վերլուծությունը:

Վերլուծության արդյունքում արձանագրվեց, որ աշխատակիցների բավարարվածության ընդհանուր մակարդակը գնահատվում է միջինից բարձր, միաժամանակ բացահայտվել են բարելավման ենթակա առանձին ուղղություններ: Մասնավորապես, ընդգծվեց մասնագիտական զարգացման և վերապատրաստման հնարավորությունների ընդլայնման, ինչպես նաև աշխատակիցների մասնագիտական առաջընթացին նպաստող պայմանների հետագա կատարելագործման անհրաժեշտությունը:

Քննարկեցին - Նիստի մասնակիցները կարևորեցին ներքին շահակիցների բավարարվածության պարբերական գնահատման անհրաժեշտությունը՝ որպես որակի ապահովման համակարգի կարևոր բաղադրիչ:

Որոշեցին

1. Հարցման արդյունքները ներկայացնել ռեկտորատի քննարկմանը:
2. Մշակել աշխատակիցների մասնագիտական զարգացման տարեկան ծրագիր:

2. Լսեցին – Ք. Հայրապետյանը ներկայացրեց ԳՊՀ–դպրոցներ համագործակցության ընթացիկ վիճակը և զարգացման հնարավոր ուղղությունները:

Նշվեց, որ համագործակցությունը հիմնականում իրականացվում է մասնագիտական կողմնորոշման հանդիպումների, բաց դասերի, ուսանողների ներգրավմամբ իրազեկման միջոցառումների միջոցով:

Միաժամանակ ընդգծվեց, որ անհրաժեշտ է համագործակցությունը դարձնել ավելի համակարգված և արդյունքահեն:

Արտահայտվեցին - Նիստի մասնակիցները առաջարկեցին ընդլայնել դպրոցների հետ համատեղ նախագծերը, ներգրավել ավագ դասարանների աշակերտներին համալսարանական միջոցառումներում, ձևավորել համագործակցության տարեկան գործողությունների պլան:

Քննարկեցին - Քննարկման ընթացքում ընդգծվեց, որ դպրոցների հետ համագործակցությունը պետք է դիտարկել որպես ուսանողների ընդունելության որակի բարձրացման և համալսարանի տեսանելիության ընդլայնման կարևոր գործիք:

Որոշեցին

1. Մշակել ԳՊՀ–դպրոցներ համագործակցության 2023 թվականի գործողությունների պլան:
2. Սահմանել պատասխանատու համակարգողներ յուրաքանչյուր ֆակուլտետում:
3. Կազմակերպել առնվազն մեկ համատեղ միջոցառում յուրաքանչյուր կիսամյակում:

3. Լսեցին - Ն. Մուրադյանը ներկայացրեց ԳՊՀ պաշտոնական կայքէջի մշտադիտարկման արդյունքները:

Արձանագրվեց, որ համալսարանի պաշտոնական կայքէջն ընդհանուր առմամբ գործում է բավարար մակարդակով, սակայն բացահայտվել են կատարելագործման ենթակա մի շարք ուղղություններ: Մասնավորապես, նշվեց, որ առանձին բաժիններում տեղեկատվությունը ժամանակին չի թարմացվում, մասնագիտությունների կրթական ծրագրերի վերաբերյալ ներկայացված տվյալները որոշ դեպքերում ամբողջական չեն, իսկ միջազգային համագործակցությանն առնչվող տեղեկատվական բաժինը կարիք ունի բովանդակային համալրման և պարբերական արդիականացման:

Քննարկեցին - Նիստի մասնակիցները ընդգծեցին, որ ԳՊՀ կայքէջը հանդիսանում է արտաքին հաշվետվողականության հիմնական գործիք և անմիջականորեն ազդում է հաստատության հանրային պատկերի վրա:

Որոշեցին

1. Մինչև 2023 թվականի մարտ ամիսը թարմացնել կայքէջի բոլոր ՄԿԾ-ների տեղեկատվությունը:

Պատասխանատու՝ ԳՊՀ ՈԱ, արտաքին կապերի և լրատվության և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժիններ, ֆակուլտետներ, ամբիոնի վարիչներ:
Կատարման ժամկետ՝ 2022–2023 ուսումնական տարի:

ՈԱԲ նիստը նախագահող՝ **Ք. Հայրապետյան**

Քարտուղար՝ **Մ. Նախրատյան**

Գավառի պետական համալսարանի որակի ապահովման բաժնի

2023 թվականի մարտի 29-ի

թիվ 7 նիստի արձանագրություն

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Դիմորդների կարիքների և հանրակրթական դպրոցների ուսուցիչների մասնագիտական, մանկավարժական որակների բարձրացման ուղղությամբ կարիքների վերհանման վերաբերյալ նոր հարցաթերթերի քննարկում:

   /Զեկուցող՝ Որակի ապահովման բաժնի վարիչի ժ/պ Ք. Հայրապետյան/

2. Գավառի պետական համալսարանում դասավանդման որակի և ուսումնական գործընթացի արդյունավետության գնահատման հարցման արդյունքների վերլուծության մասին:

   /Զեկուցող՝ Որակի ապահովման բաժնի մասնագետ Նոնա Մուրադյան/

3. Գավառի պետական համալսարանում կրթական ռեսուրսներից դասախոսների բավարարվածության գնահատման արդյունքների վերլուծության մասին:

   /Զեկուցող՝ Որակի ապահովման բաժնի մասնագետ Մ. Նախրատյան/

1. Լսեցին - Ք. Հայրապետյանը ներկայացրեց դիմորդների և հանրակրթական դպրոցների ուսուցիչների կարիքների վերհանման նպատակով մշակված նոր հարցաթերթերի նախագծերը:

Նշվեց, որ հարցաթերթերի նպատակն է գնահատել դիմորդների ակնկալիքները համալսարանական կրթությունից, բացահայտել հանրակրթական դպրոցների ուսուցիչների մասնագիտական զարգացման կարիքները, ձևավորել հիմք՝ բուհ-դպրոց համագործակցության ծրագրերի բարելավման համար:

Քննարկեցին - Քննարկման ընթացքում ընդգծվեց, որ շահակիցների կարիքների վերհանումը կարևոր է ընդունելության քաղաքականության և ՄԿԾ-ների բարելավման համար:

Որոշեցին

1. Դիմորդների կարիքների և հանրակրթական դպրոցների ուսուցիչների մասնագիտական, մանկավարժական որակների բարձրացման ուղղությամբ կարիքների վերհանման հարցումներն իրականացնել մեկ ամսվա ընթացքում

և արդյունքները ներկայացնել ԳՊՀ ռեկտորատի և գիտական խորհրդի քննարկմանը:

2. Լսեցին - Նոնա Մուրադյանը ներկայացրեց դասավանդման որակի և ուսումնական գործընթացի արդյունավետության գնահատման հարցման արդյունքները:

Հարցման արդյունքների վերլուծությամբ պարզվել է, որ ուսանողների մեծ մասը դրական է գնահատում դասավանդման ընդհանուր որակը, առկա են խնդիրներ գործնական աշխատանքի ծավալի և կիրառական բաղադրիչի մասով, անհրաժեշտ է ուժեղացնել հետադարձ կապն ուսանողների և դասախոսների միջև:

Քննարկեցին - Նշվեց, որ ուսուցման որակի բարելավման համար անհրաժեշտ է զարգացնել ուսանողակենտրոն ուսուցման մեթոդները, ավելացնել գործնական և նախագծային աշխատանքների տեսակարար կշիռը:

Որոշեցին

1. Հարցման արդյունքները ներկայացնել ԳՊՀ ռեկտորատի և գիտական խորհրդի քննարկմանը:

3. Լսեցին - Մ. Նախրատյանը ներկայացրեց կրթական ռեսուրսներից դասախոսների բավարարվածության գնահատման արդյունքները: Վերլուծության արդյունքում արձանագրվել է, որ դասախոսների մեծ մասը բավարար է գնահատում կրթական ռեսուրսների հասանելիությունը, էլեկտրոնային ռեսուրսների օգտագործման մակարդակը դեռևս անհավասար է տարբեր ֆակուլտետներում:

Քննարկեցին - Քննարկման ընթացքում ընդգծվեց, որ կրթական ռեսուրսների հավասար հասանելիությունը կարևոր նախապայման է կրթության որակի ապահովման համար:

Որոշեցին

1. Կատարել կրթական ռեսուրսների համալրման կարիքների քարտեզագրում՝ ըստ ֆակուլտեների:
2. Համալրել էլեկտրոնային գրադարանի պաշարները:

Պատասխանատու՝ ԳՊՀ ՈԱ բաժին, ՈՒԽ, ՈՒԳ, ֆակուլտետներ, ամբիոնի վարիչներ:

Կատարման ժամկետ՝ 2022–2023 ուսումնական տարի:

ՈԱԲ նիստը նախագահող՝ **Ք. Հայրապետյան**

Քարտուղար՝ **Մ. Նախրատյան**

Գավառի պետական համալսարանի որակի ապահովման բաժնի

2023 թվականի ապրիլի 26 թիվ 8

նիստի արձանագրություն

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Շարունակական մասնագիտական զարգացման ծրագրի շրջանակներում հաշվապահների վերապատրաստման դասընթացից մասնակիցների բավարարվածության գնահատման վերլուծության մասին:

   /Զեկուցող՝ Որակի ապահովման բաժնի վարիչի ժ/պ Ք. Հայրապետյան/

2. ԳՊՀ-դպրոցներ համագործակցության ծրագրերի ընթացքի մասին:

   /Զեկուցող՝ Որակի ապահովման բաժնի մասնագետ Նոնա Մուրադյան/

3. Ընթացիկ հարցեր:

1. **Լսեցին** - Ք. Հայրապետյանը ներկայացրեց շարունակական մասնագիտական զարգացման ծրագրի շրջանակներում իրականացված հաշվապահների վերապատրաստման դասընթացի մասնակիցների բավարարվածության գնահատման հարցման արդյունքների վերլուծությունը:

Նշվեց, որ հարցման արդյունքները ցույց են տալիս մասնակիցների ընդհանուր բարձր բավարարվածությունը դասընթացի բովանդակությունից, դասախոսների մասնագիտական պատրաստվածությունից և ուսուցման կազմակերպումից: Միաժամանակ արձանագրվեցին առաջարկություններ՝ գործնական առաջադրանքների քանակի ավելացման, իրական մասնագիտական դեպքերի կիրառման և դասընթացի տևողության ընդլայնման վերաբերյալ:

Քննարկեցին - Նիստի մասնակիցները կարևորեցին մասնակիցների հետադարձ կապի համակարգված կիրառումը շարունակական կրթության ծրագրերի կատարելագործման գործընթացում: Առաջարկվեց հաջորդ դասընթացներում ընդլայնել գործնական պարապմունքների տեսակարար կշիռը և պարբերաբար գնահատել մասնակիցների բավարարվածությունը:

Որոշեցին

1. Հարցման արդյունքները ներկայացնել ԳՊՀ ռեկտորատի և գիտխորհրդի քննարկմանը:

2. **Լսեցին** - Նոնա Մուրադյանը ներկայացրեց ԳՊՀ–դպրոցներ համագործակցության ծրագրերի իրականացման ընթացքը:

Նշվեց, որ հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել են մասնագիտական կողմնորոշման հանդիպումներ, բաց դասեր, տեղեկատվական այցեր և խորհրդատվություններ Գեղարքունիքի մարզի հանրակրթական դպրոցներում: Արձանագրվեց, որ դպրոցների ղեկավարների և ուսուցիչների կողմից բարձր է գնահատվել համագործակցության արդյունավետությունը, միաժամանակ առաջարկվել է ընդլայնել համատեղ միջոցառումների շրջանակը և առավել ակտիվ ներգրավել ավագ դպրոցի աշակերտներին:

Արտահայտվեցին - Նիստի մասնակիցները կարևորեցին դպրոցների հետ համագործակցության շարունակական զարգացումը՝ որպես դիմորդների իրազեկվածության բարձրացման և համալսարանի հասարակական ներգրավվածության կարևոր ուղղություն: Առաջարկվեց համագործակցության ծրագրերում ընդգրկել նաև Համալսարանի լավագույն ուսանողներին և շրջանավարտներին՝ որպես հաջողված փորձի ներկայացնողներ:

Որոշեցին

1. Շարունակել և ընդլայնել ԳՊՀ–դպրոցներ համագործակցության ծրագրերը:
2. Համագործակցության արդյունավետությունը գնահատելու նպատակով իրականացնել դպրոցների ներկայացուցիչների և միջոցառումների մասնակիցների բավարարվածության հարցումներ: Հարցումների արդյունքները ներկայացնել ՈԱ բաժնի հաջորդ նիստում և օգտագործել համագործակցության ծրագրերի բարելավման նպատակով:

3. Ընթացիկ հարցեր

Քննարկվեցին որակի ապահովման ընթացիկ աշխատանքների կազմակերպման, առաջիկա հարցումների ժամանակացույցի և ստորաբաժանումների կողմից տեղեկատվության ներկայացման հետ կապված հարցեր:

Որոշեցին

Ապահովել հարցումների արդյունքների ներկայացումը ԳՊՀ ռեկտորատի և գիտխորհրդի քննարկմանը:

Պատասխանատու՝ ԳՊՀ ՈԱ, ակադեմիական քաղաքականության, արտաքին կապերի և լրատվության բաժիններ, ՈՒԽ, ֆակուլտետներ, ամբիոնի վարիչներ:
Կատարման ժամկետ՝ 2022–2023 ուսումնական տարի:

ՈԱԲ նիստը նախագահող՝ **Ք. Հայրապետյան**
Քարտուղար՝ **Մ. Նախրատյան**

Գավառի պետական համալսարանի որակի ապահովման բաժնի

2023 թվականի մայիսի 20-ի

թիվ 9 նիստի արձանագրություն

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Մանկավարժական, արտադրական, նախաավարտական պրակտիկաների կազմակերպման ընթացքից և արդյունավետությունից Գավառի պետական համալսարանի ուսանողների բավարարվածության գնահատման արդյունքների վերլուծություն:

/Զեկուցող՝ Որակի ապահովման բաժնի մասնագետ Ն. Մուրադյան/

2. Գործատու-բուհ համագործակցության արդյունավետության բարձրացմանը միտված միջոցառումների մասին:

/Զեկուցող՝ Որակի ապահովման բաժնի վարիչի ժ/պ Ք. Հայրապետյան/

1. **Լսեցին** - Ն. Մուրադյանը ներկայացրեց մանկավարժական, արտադրական և նախաավարտական պրակտիկաների կազմակերպման ընթացքի և արդյունավետության վերաբերյալ ուսանողների բավարարվածության գնահատման հարցման արդյունքների վերլուծությունը:

Նշվեց, որ հարցման նպատակն էր գնահատել պրակտիկաների կազմակերպման որակը, ձեռք բերված մասնագիտական կարողությունների ձևավորման աստիճանը, պրակտիկայի ղեկավարների աջակցությունը:

Վերլուծության արդյունքում արձանագրվեց, որ ուսանողների մեծ մասը դրական է գնահատել պրակտիկաների կազմակերպման ընդհանուր մակարդակը և մասնագիտական փորձի ձեռքբերման հնարավորությունները: Միաժամանակ արձանագրվել են առաջարկություններ՝ ուղղված պրակտիկայի տևողության ավելացմանը, գործատուների հետ անմիջական համագործակցության ընդլայնմանը:

Քննարկեցին - Նիստի մասնակիցները կարևորեցին պրակտիկաների դերը ՄԿԾ-ների ուսումնառության արդյունքների ձևավորման և աշխատաշուկային համապատասխան մասնագիտական կարողությունների զարգացման գործում:

Առաջարկվեց - Ընդլայնել պրակտիկայի կազմակերպման գործընկեր հաստատությունների շրջանակը, ապահովել պրակտիկայի ղեկավարների և գործատուների առավել ակտիվ համագործակցությունը, պրակտիկայից հետո

կազմակերպել ուսանողների և գործատուների հետ հետադարձ կապի քննարկումներ՝ բարելավման հնարավորությունները բացահայտելու նպատակով:

Որոշեցին

1. Հարցման արդյունքները ներկայացնել ԳՊՀ ռեկտորատի և գիտխորհրդի քննարկմանը:
2. Մշակել պրակտիկաների կազմակերպման բարելավման միջոցառումների ծրագիր՝ հաշվի առնելով ուսանողների և գործատուների առաջարկությունները:

2. **Լսեցին** - Ք. Հայրապետյանը ներկայացրեց գործատու–բուհ համագործակցության արդյունավետության բարձրացմանն ուղղված իրականացվող և նախատեսվող միջոցառումները: Նշվեց, որ համագործակցության հիմնական նպատակներն են ՄԿԾ-ների համապատասխանեցումն աշխատաշուկայի պահանջներին, ուսանողների մասնագիտական փորձի ընդլայնումը, պրակտիկաների արդյունավետ կազմակերպումը և շրջանավարտների զբաղվածության խթանումը:

Ներկայացվեցին համագործակցության հնարավոր ուղղությունները՝ գործատուների մասնակցություն ամբիոնային և ֆակուլտետային քննրկումներին, գործատուների ներգրավում ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի թեմաների քննարկման և գնահատման գործընթացներում, շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ տվյալների պարբերական հավաքագրում:

Արտահայտվեցին - Նիստի մասնակիցները կարևորեցին գործատուների շարունակական ներգրավվածությունը որպես որակի ներքին ապահովման համակարգի կարևոր բաղադրիչ: Առաջարկվեց յուրաքանչյուր ՄԿԾ-ի համար ձևավորել հիմնական գործընկեր գործատուների ցանկ և պարբերաբար գնահատել համագործակցության արդյունավետությունը:

Որոշեցին

1. Յուրաքանչյուր ՄԿԾ-ի շրջանակում ընդլայնել գործատուների մասնակցությունը կրթական ծրագրերի վերանայման, պրակտիկաների կազմակերպման և ուսումնառության արդյունքների գնահատման գործընթացներում:

2. Տարեկան առնվազն մեկ անգամ կազմակերպել գործատուների մասնակցությամբ քննարկում՝ ՄԿԾ-ների համապատասխանությունը աշխատաշուկայի պահանջներին գնահատելու նպատակով:

Պատասխանատու՝ ԳՊՀ ՈԱ, ակադեմիական քաղաքականության, արտաքին կապերի և լրատվության բաժիններ, ֆակուլտետներ, ամբիոնի վարիչներ:
Կատարման ժամկետ՝ 2022–2023 ուսումնական տարի:

ՈԱԲ նիստը նախագահող՝ **Ք. Հայրապետյան**
Քարտուղար՝ **Մ. Նախրատյան**